միտումների կանխատեսման, այնպես էլ հանրապետության բնակչության կենսոլորտի առանձնահատկությունների հաշվառման ու տնտեսության զարգացման կայուն ծրագրերի մշակման և իրականացման միջոցով՝ դնելով այդ ծրագրերը հասարակության ձևավորման ռազմավարության ու պետության տնտեսական քաղաքականության հիմքում:

Հայաստանում ֆերմերային տնտեսությունների նախատիպ գյուղացիական տնտեսություններն ունեն զարգանալու և հզորանալու հնարավորություններ, սակայն դրանք այնպես, ինչպես որ կան, այդպիսի վիճակում երկար թողնել չի կարելի:

ՍԵՐԳԵՅ ՂԱՋԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն գիտության գծով, տ.գ.դ., պրոֆեսոր

ՀԵՆՐԻԿ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ
ՀՊԱՀ տ.գ.դ., պրոֆեսոր

ՎԱՐԴՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՊԱՀ տնտեսագիտության ամբիոնի լաբորանտ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ ՈՒՂԻՆԵՐԸ

Աշխարհի բոլոր զարգացած երկրների գյուղատնտեսության ոլորտի գործունեության մեջ ընդգրկվել են արտադրության մասնագիտացման և կոոպերացման գործընթացները, որոնք այժմ համաշխարհային տնտեսության գլոբալ զարգացման կարևորագույն գործոններն են ու այդ տեսակետից հանրապետության պարենային ապահովության և անվտանգության հարցերում ծագած մասնագիտացման գործընթացների բարելավում անկասկած, հնարավորություն կարող են ստեղծել՝ գյուղատնտեսությունը վերածելու սեփականության բազմաձևության վրա հիմնված և շուկայական հարաբերություններով կարգավորվող ազգային տնտեսության մի կայուն ու արդյունավետ ճյուղի, ինչպես նաև բարելավելու գյուղատնտեսության վարման համակարգը հանրապետության մարզերում:

Հանրապետության տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 369-4095 մ բարձրության վրա, որի բնատնտեսական բազմազանության պայմաններում ձևավորվել են արտադրության բավականին հստակ մասնագիտացված տարածաշրջաններ: Շատ դեպքերում, լեռնային գոտիականության հետևանքով, միևնույն տարածաշրջանի ներսում կտրուկ փոփոխվում են գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման ու մասնագիտացման պայմանները: Չնայած դրան, շրջանների և դրանց մեջ տեղադրված տնտեսությունների ավելի քան 80%-ը ունեցել է արտադրության արտահայտված մասնագիտացում:

Այնուամենայնիվ, սեփականաշնորհումից հետո թուլացել է տնտեսությունների ուշադրությունը մասնագիտացման հարցերի նկատմամբ, որոնք առաջին հերթին պայմանավորված են ճյուղի կառուցվածքային տեղաշարժերով և ճյուղում ու սպառողական շուկայում կոնյունկտուրայի էական տատանումներով: Խախտվել է հարաբերությունը գլխավոր և լրացուցիչ ճյուղերի միջև: Ճյուղում տեղ գտած թերությունները և առաջացած օբյեկտիվ հիմնահարցերը ներկայումս սահմանափակում են հողի, ջրի, տեխնիկայի, քիմիացման, աշխատանքային ռեսուրսների և

ինտենսիֆիկացման այլ գործոնների արդյունավետ օգտագործման և արտադրության շահութաբերության բարձրացման հնարավորությունները: Կարիք է զգացվում բարելավելու բուսաբուծական և անասնաբուծական ճյուղերի ներտնտեսային մասնագիտացման գործընթացն ըստ առանձին շրջանների ու մարզերի, որի համար անհրաժեշտ է, նախ և առաջ, ճիշտ որոշել տվյալ վարչատարածքային միավորի գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման ցանկալի տիպերը:

Արտադրության մասնագիտացման տիպի որոշման համար ընդունված է օգտագործել մի շարք ցուցանիշներ, որոնցից հիմնականը ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքն է: Կարևոր է նաև հաշվի առնել համախառն արտադրանքի արժեքի կառուցվածքը, գյուղատնտեսական հողօգտագործումը, անասնագլխաքանակը, բերքատվության և մթերատվության մակարդակը, շահութաբերությունը, մեկ հեկտարի և մեկ գլխի հաշվով եկամուտն ու զուտ եկամուտը, աշխատանքային ու նյութատեխնիկական ծախսերը և այլն:

Մարզերը և տնտեսությունները այս կամ այն տիպի մասնագիտացման ուղղությանը վերագրելու համար օգտվել ենք ընդունված և մեր կողմից մշակված (Հ. Մամիկոնյան) նորմատիվներից.

1. եթե առաջատար ճյուղի ապրանքային արտադրանքի արժեքը կազմում է ամբողջ ապրանքային արժեքի կառուցվածքի 40%-ը և ավելի, ապա տնտեսությունը (մարզը) ունի արտադրական մասնագիտացման մեկ ուղղություն: Այն կարող է լինել թույլ մասնագիտացված՝ 40-50%, մասնագիտացված՝ 50-60% և խորը մասնագիտացված՝ 60% և ավելի[1],
2. եթե երկու ճյուղերի ապրանքային արտադրանքի արժեքի գումարի տեսակարար կշիռը կազմում է ամբողջ ապրանքային արժեքի կառուցվածքի 60%-ից ոչ պակաս, ապա տնտեսությունը կամ մարզը ունի արտադրական մասնագիտացման երկու ուղղություն: Երկրորդ մասնագիտացման ճյուղը չպետք է պակաս լինի 25%-ից: Այստեղ թույլ մասնագիտացված կհամարվեն 60-65% ունեցողները, մասնագիտացված՝ 65-70% և խորը մասնագիտացված՝ 70 և ավելի տոկոս ունեցող ճյուղերը,
3. մասնագիտացված կարելի է համարել նաև այն տնտեսությունները և մարզերը, որոնք ունեն երեք առաջատար ճյուղեր, որոնց ապրանքային արտադրանքի արժեքի գումարը կազմում է ընդհանուր ապրանքային արտադրանքի արժեքի գումարի ոչ պակաս, քան 70%-ը: Այստեղ երրորդ ճյուղի արտադրանքը չպետք է պակաս լինի ամբողջ ապրանքային արտադրանքի 20%-ից: Թույլ մասնագիտացված կհամարվեն այն տնտեսությունները, որոնցում երեք ճյուղերի գումարը կկազմի 70-75%, մասնագիտացված՝ 75-80% և խորը մասնագիտացված՝ 80% և ավելի:

Նշված չափանիշներին չհամապատասխանողները դասվում են չմասնագիտացված կամ խառը արտադրություն վարող տնտեսությունների շրջանների կամ մարզերի շարքին:

Վերը նշված մասնագիտացված տնտեսություններում կարող են լինել լրացուցիչ այնպիսի ճյուղեր, որոնք համապատասխան ապրանքի կառուցվածքում կունենան համեմատաբար մեծ տեսակարար կշիռ և հնարավորություն՝ ճյուղը վարելու տեխնիկական և տեխնոլոգիական առկա նվաճումների մակարդակով: Դրանք կկոչվեն զարգացած ճյուղեր:

Հանրապետության գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ տեղաբաշխման և մասնագիտացման ուղիները որոշելիս առաջին հերթին հաշվի ենք առել հետևյալ խնդիրների լուծումը.

1. սեփական արտադրության հաշվին հանրապետության բնակչության պահանջմունքների ապահովումը դժվար փոխադրունակ, շուտ փչացող գյուղմթերքներով՝ բանջարեղենով, կարտոֆիլով, խաղողով, պտղով, բոստանեղենով, թարմ կաթով և ձվով:

---

[1] Տնտեսությունների և նախկին շրջանների տեսակարար կշիռները հաշվարկվում են մարզերի, իսկ մարզերինը՝ հանրապետության գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի արժեքների:

2. Ավելացնել հացահատիկի, մսի և այլ մթերքների արտադրության ավելացումը հնարավորության սահմաններում:
3. Վերամշակող արդյունաբերության հումքային բազայի ընդլայնումը:

Նշված խնդիրների լուծման հիմքում դրվել են նաև հանրապետության շրջանների բնական ու տնտեսական գործոնների առանձնահատկությունները: Օրինակ՝ գյուղատնտեսական աշխատանքային ռեսուրսների պահանջը հանրապետության բոլոր շրջաններում գերազանցում է դրա նկատմամբ պահանջարկը: Հետևաբար, մասնագիտացման գործընթացի խորացման հետ մեկտեղ, անհրաժեշտ է կոնկրետ միջոցառումներ իրականացնել աշխատանքային ռեսուրսների հավասարաչափ ու ռացիոնալ օգտագործման, օժանդակ տնտեսությունների, ծառայությունների, արտադրական սպասարկման, տնայնագործության զարգացման և այլ ուղղություններով:

Արտադրության մասնագիտացման խորացումը սերտորեն կապված է տնտեսական շահագրգռվածության հետ, որն էլ ուղղակիորեն բխում է գների մակարդակից և պետության գնագոյացման կարգավորման քաղաքականությունից: Վերջիններից է կախված այս կամ այն մթերքների արտադրության շահութաբերությունը, իսկ տարբեր գյուղմթերքների գների միջև համեմատաբար ճիշտ հարաբերակցության պահպանումը կօգնի ավելի արագ լուծել դրանց արտադրության ավելացման և շահութաբերության բարձրացման խնդիրները: Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում գյուղմթերքների արտադրության արդյունավետությունը բնութագրելու համար առաջնահերթ նշանակություն են ձեռք բերում համախառն և զուտ եկամտի ցուցանիշները: Վերջինս նոր ստեղծված արժեք է, այսինքն՝ այն մեծությունը, որը մնում է գյուղացուն արտադրական բոլորաշրջանի (ցիկլի) ընթացքում կատարած աշխատանքի ու ծառայությունների դիմաց: Ակնհայտ է, որ ճյուղում ակնկալվող զուտ եկամտի մեծությունը որոշվում է արտադրանքի իրացման գներով, համախառն արտադրանքից հանելով նյութական և դրամական ծախսումները՝ հաշվի առնելով, որ այն աշխատանքի վարձատրության և շահույթի ամբողջություն է, իսկ դրանց տարանջատումը կարևոր է արտադրանքի հաշվարկային ինքնարժեքը որոշելու, նրա կառուցվածքը վերլուծելու և տնտեսությունների արտադրության իրական շահութաբերությունը որոշելու համար:

Հիմնական գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետության հաշվարկները կատարել ենք ըստ մարզերի:

Հաշվի առնելով մեր ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև ՀՀ մարզերի կլիմայական, տնտեսական և մյուս առանձնահատկությունները՝ դրանցից յուրաքանչյուրում գյուղատնտեսության արդյունավետ վարման նպատակով անհրաժեշտ է առաջնահերթ զարգացման հնարավորություններ ստեղծել համեմատաբար արդյունավետ և այդ պայմանների համար յուրահատուկ ճյուղերի համար: Արտադրության մեջ դրանց զբաղեցրած տեղի և ունեցած նշանակության մասին կարելի է պատկերացում կազմել ցուցանիշներից, որոնք հաշվարկվել են 2005թ. հանրապետության շուկայում ձևավորված միջին գներով: Դրանք, ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, կազմում են՝ հացահատիկը՝ 90.4 դրամ մեկ կգ-ի համար, ծխախոտը՝ 545 դրամ, կարտոֆիլը՝ 76.5 դրամ, բանջարեղենը՝ 84.1 դրամ, բոստանեղենը՝ 49.2, խաղողը՝ 153.6 դրամ, պտուղը՝ 132.9 դրամ, տավարի միսը՝ 1142.5 դրամ, խոզինը՝ 1531 դրամ, ոչխարինը՝ 1186 դրամ, թռչնինը՝ 1072 դրամ, կաթինը՝ 106 դրամ, ձվինը՝ հատը 44.9 դրամ, բուրդը 935 դրամ և այլն:

Ըստ մարզերի՝ ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքի ուսումնասիրությունները վկայում են, որ 1990թ. (սեփականաշնորհումից առաջ) և 2005թ. (սեփականաշնորհումից հետո) արտադրության մասնագիտացումը համապատասխանում է վերը նշված դրույթներին: Մարզերում 2005թ. արտադրության մասնագիտացման մեջ 1990թ. համեմատ խիստ փոփոխություններ չեն եղել: Այն հիմնականում խառը մասնագիտացման ուղղություն է ունեցել: Սակայն, 2005թ. բուսաբուծության ապրանքային արտադրանքի կառուցվածքում որոշ չափով աճել են հացի և կարտոֆիլի տեսակարար կշիռները: Դա ընդհանուր առմամբ բացասական

համարել չի կարելի, եթե չլինեին Արարատյան հարթավայրի շրջաններում տեղ գտած թերությունները: Օրինակ՝ Արարատի, Արմավիրի մարզերում հացահատիկի տեսակարար կշռի աճը տեղի է ունեցել բանջարեղենի, որոշ դեպքերում նաև խաղողի և պտղատու այգիների տարածության պակասեցման հաշվին:

Բոլոր մարզերում զգալիորեն պակասել են կերային մշակաբույսերի ցանքատարածությունները, որը խիստ բացասաբար է անդրադարձել անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների վրա, չնայած ապրանքային արտադրանքի կառուցվածքում այս միտումը ցայտուն արտահայտված չէ:

Հետազոտությունների արդյունքում եկել ենք այն եզրակացության, որ հանրապետության գյուղատնտեսության արդյունավետ վարման համար առաջիկայում ճյուղի զարգացումն ու արտադրական մասնագիտացումն ըստ մարզերի անհրաժեշտ է խորացնել այդ տարածքների յուրահատուկ դարձած ուղղություններով:

Բացի վերը նշված մասնագիտացման ուղղություններից, անհրաժեշտ է նպաստել նաև հանրապետության գյուղատնտեսության համար այլ ավանդական և ոչ ավանդական մյուս ճյուղերի, ինչպես նաև կերարտադրության զարգացման խնդիրների լուծմանը:

Հիմնվելով հեռանկարում առաջարկվող արտադրական մասնագիտացման ուղղությունների և հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման հնարավորությունների վրա՝ կատարել ենք հաշվարկներ գյուղմթերքների արտադրության ավելացման հնարավորությունների բացահայտման ուղղությամբ: Կատարված հետազոտությունները հիմք են ծառայում՝ բնութագրելու հանրապետությունում նոր ստեղծված վարչատարածքային միավորների՝ մարզերի հնարավորությունները գյուղատնտեսության տարածքային զարգացման, արտադրության նպատակաուղղված մասնագիտացման և գյուղմթերքների արտադրության ավելացման ուղղությամբ: Գյուղատնտեսական արտադրության զարգացման մի շարք ծավալային ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս կոնկրետացնել գյուղատնտեսական արտադրության նպատակահարմար մասնագիտացման ու տեղաբաշխման ուղղությամբ արված առաջարկություններն ըստ հանրապետության առանձին մարզերի:

1. <u>Արագածոտնի մարզի</u> գյուղատնտեսությունն ունի արտադրության մասնագիտացման խառը ուղղություն, զարգացած է մսակաթնային տավարաբուծության ուղղությամբ: Ընդգրկում է Աշտարակի, Ապարանի, Արագածի և Թալինի նախկին վարչական շրջանները և զբաղեցնում է 274.6 հազ հա տարածություն, որը կազմում է հանրապետության տարածքի 9.2%-ը: Աշտարակի և Թալինի տարածաշրջաններում զարգացած է նաև պտղագործությունը: Գյուղատնտեսական հանդակները զբաղեցնում են մարզի տարածքի 49.7%-ը, որոնցից 41%-ը վարելահողեր են, 6.2%-ը՝ բազմամյա տնկարկներ, մնացածը՝ բնական կերահանդակներ: Հանրապետության գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի արժեքում մարզի տեսակարար կշիռը կազմում է շուրջ 10%, իսկ մարզի գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքում անասնաբուծության տեսակարար կշիռը կազմում է 45%:

Մարզի գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացումը հեռանկարում պետք է ուղղել մսակաթնային տավարաբուծության վերելքին: Աշտարակի և Թալինի շրջաններում կզարգանան նաև պտղագործությունը, իսկ Ապարանի և Արագածի շրջաններում՝ ոչխարաբուծությունը:

Հնարավոր չէ երկրում ունենալ բնամթերային ագրարային ոլորտ և ձևավորել ազատ շուկայական տնտեսություն: Այստեղից բխում է գյուղատնտեսության հետագա զարգացման գլխավոր խնդիրը՝ գյուղացիական տնտեսությունների սոցիալական, տնտեսական ու կազմակերպման հենքի վրա խոշոր ապրանքային մասնագիտացված արտադրության աստիճանական ձևավորումը:

2. Արարատի մարզում գյուղատնտեսական արտադրության զարգացած ճյուղերն են բանջարաբուծությունը և խաղողագործությունը: Այստեղ զարգացած են նաև տավարաբուծությունը, պտղագործությունը, վաղ կարտոֆիլի արտադրությունը: Ստեղծված է արդյունաբերական թռչնաբուծության զարգացման լավ ներուժ:

Մարզի մեջ են մտնում Արարատի, Արտաշատի և Մասիսի նախկին շրջանները, որոնք միասին զբաղեցնում են 208.9 հազ. հա տարածք կամ հանրապետության տարածքի 7.0%-ը: Դրա 47.5%-ը գյուղատնտեսական հողատեսքեր են, որոնցից 28.3%-ը վարելահողեր են, 13.7%-ը խաղողի և պտղի այգիներ, իսկ մնացածը՝ բնական արոտներ ու խոտհարքներ: Այստեղ են արտադրվում հանրապետության բանջարեղենի շուրջ 31%-ը, խաղողի 40.1%-ը, վաղ կարտոֆիլի և բոստանեղենի՝ 30%-ը և շատ ուրիշ գյուղմթերքներ: Հանրապետության գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի արժեքի մոտավորապես 16.6%-ը, արտադրվում է այստեղ, որում բուսաբուծության տեսակարար կշիռը ավելի քան 79% է կազմում:

Մարզում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը հումքի բազա է այստեղ գտնվող գինեգործական, պահածոների, կաթի վերամշակման և այլ ձեռնարկությունների համար:

Մեր կարծիքով հեռանկարում անհրաժեշտ է կառավարության ագրարային քաղաքականությունն ուղղել մարզի գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացմանը ներկայիս զարգացած ճյուղերի շրջանակներում: Չի բացառվում, որ շուկայի պահանջներից ելնելով կավելանան նաև այս մարզի համար ոչ ավանդական ճյուղերի՝ մեղվաբուծության, գազպնաբուծության, ձկնաբուծության արտադրանքի ծավալները: Ըստ հաշվարկների, վերը նշված պայմաններում, ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքում առաջիկայում ամենամեծ տեղը կզբաղեցնեն բանջարաբուծությունն ու խաղողագործությունը:

3. Արմավիրի մարզում է արտադրվում հանրապետության գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի շուրջ 20 տոկոսը, որում բուսաբուծության տեսակարար կշիռը կազմում է մոտ 75 տոկոս: Մարզի բուսաբուծությունը ամբողջովին հիմնված է ոռոգելի հողօգտագործման վրա: Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ելքը 100 հա գյուղատնտեսական հողերի հաշվով 3,2 անգամ ավելի է, քան հանրապետության միջինը: Այստեղ են տեղադրված գինու, կաթի վերամշակման, պահածոների շատ ձեռնարկություններ:

Զարգացած են խաղողագործությունը, բանջարաբուծությունը, պտղագործությունը, վաղ կարտոֆիլագործությունը, տավարաբուծությունը: Ստեղծված է արդյունաբերական խոզաբուծության և թռչնաբուծության զարգացած ներուժ: Այստեղ են տեղաբաշխված խորդենու արտադրության ողջ հնարավորությունները:

Մարզը տեղաբաշխված է Արարատյան հարթավայրի ցածրադիր գոտում և ընդգրկում է Արմավիրի, Բաղրամյանի և Էջմիածնի նախկին շրջանները: Տարածքը զբաղեցնում է 122.6 հազ. հա, որը կազմում է հանրապետության տարածքի 4.1%-ը: Դրա 65%-ը գյուղատնտեսական հողատեսքերն են, որոնցից վարելահողերը կազմում են գյուղհողերի 44.2%-ը, խաղողի (35.6%) և պտղի այգիները՝ 22.1% և բնական կերահանդակները՝ 33.7%: Մարզը գտնվում է ինտենսիվ հողօգտագործման գոտում, որտեղ արտադրվում են հանրապետության բանջարեղենի 42%-ը, խաղողի 44%-ը, պտղի 25%-ը, վաղ կարտոֆիլի 30%-ը, բոստանեղենի 72%-ը և շատ ուրիշ գյուղմթերքներ:

Մարզի բուսաբուծությունը ամբողջովին հիմնված է ոռոգելի հողագործության վրա: Այստեղ են տեղաբաշխված պահածոների, գինու, կաթի վերամշակման բազմաթիվ ձեռնարկություններ և խորդենու յուղի արտադրության գործարանը:

Հեռանկարում մարզի բուսաբուծությունը նպատակահարմար է զարգացնել խաղողագործության, բանջարաբուծության, պտղագործության, վաղահաս կարտոֆիլի և խորդենու արտադրության, իսկ անասնաբուծությունը՝ տավարաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության ուղղությամբ:

4. <u>Գեղարքունիքի մարզ</u>: Գյուղատնտեսությունը զարգացած է մսակաթնային տավարաբուծության և կարտոֆիլագործության ուղղությամբ: Սևանա լճի ավազանում գտնվող հինգ նախկին շրջանները (Կամոյի, Կրասնոսելսկի, Մարտունու, Սևանի և Վարդենիսի) ընդգրկված են այս մարզում:

Տարածքը զբաղեցնում է հանրապետության ընդհանուր տարածքի 13.6%-ը և կազմում է 405.2 հազ հա: Գյուղատնտեսական հողատեսքերը մարզի ընդհանուր տարածքի 59%-ն են, որոնցից մոտավորապես 60%-ը բնական կերային հանդակներ են, իսկ մնացածը՝ հիմնականում վարելահողեր: Այստեղ արտադրվում է հանրապետության կարտոֆիլի ավելի քան 40%-ը: ՀՀ գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի արժեքում մարզի տեսակարար կշիռը կազմում է 15%, որում անասնաբուծական արտադրանքին ընկնում է դրա 41%-ը:

Մարզում նախադրյալներ կան գյուղատնտեսական արտադրության ավանդական ճյուղերը՝ տավարաբուծությունը, կարտոֆիլագործությունը, ոչխարաբուծությունը և հացահատիկային տնտեսությունը, զարգացնելու համար: Այստեղ հատուկ ուշադրության է արժանի մսակաթնային տավարաբուծության և ձկնաբուծության զարգացման համար նպաստավոր պայմանների ապահովման հարցը:

5. <u>Լոռու մարզի</u> գյուղատնտեսությունը զարգացած է տավարաբուծության, կարտոֆիլագործության ուղղությամբ: Մարզի մեջ են մտնում Գուգարքի, Թումանյանի, Սպիտակի, Ստեփանավանի և Տաշիրի նախկին շրջանները: Տարածքը 72.8 հազ. հա է (հանրապետության տարածքի 12.5%-ը), որի կեսից մի փոքր ավելին գյուղատնտեսական հողեր են: Վերջիններիս 24.8%-ը վարելահողեր են, 2.4%-ը՝ բազմամյա տնկարկներ, և մնացածը՝ բնական խոտհարքներ ու արոտներ: Ինտենսիվ օգտագործվող հողերի տեսակարար կշիռը (վարելահողեր և բազմամյա տնկարկներ) գյուղատնտեսական հողերի կառուցվածքում կազմում է 27.2%, որն ամենաքիչն է մնացած մարզերի համեմատությամբ:

Այստեղ են արտադրվում հանրապետության կարտոֆիլի համախառն արտադրանքի ավելի քան 20%-ը, բարձրորակ շվեյցարական պանրի հիմնական մասը և շատ այլ գյուղատնտեսական մթերքներ: Կովկասյան գորշ ցեղի տավարի մատղաշի տոհմային կորիզը ողջ հանրապետության համար բուծվում է Տաշիրի շրջանում: Մարզի շրջաններում արտադրվում է հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի 7.0%-ը:

Այստեղ անհրաժեշտ է վարել այնպիսի ագրարային քաղաքականություն, որպեսզի գյուղացին շահագրգռված լինի հեռանկարում զարգացնելու մսակաթնային տավարաբուծությունը և կարտոֆիլագործությունը: Տոհմային գործը պետք է պահել պետական հովանավորության տակ: Սպիտակի շրջանում կարելի է վերականգնել շաքարի ճակնդեղի մշակումը:

6. <u>Կոտայքի մարզի</u> գյուղատնտեսությունը զարգացած է տավարաբուծության ուղղությամբ: Այստեղ զարգացած են նաև թռչնաբուծությունը (Նաիրիի շրջան) պտղագործությունը (Նաիրիի և Կոտայքի շրջաններ), և Հրազդանի շրջանում առկա էներգետիկ հզորությունների բազայի վրա ստեղծված է ջերմոցային տնտեսության հզոր ներուժ: Մարզի կազմում են ընդգրկված Կոտայքի, Հրազդանի և Նաիրիի նախկին շրջանները, որոնք զբաղեցնում են հանրապետության տարածքի 6.9%-ը կամ 206.2 հազ. հա: Գյուղատնտեսական հողերը ամբողջ տարածքի 48.2% են կազմում, որոնցից 39.7%-ը վարելահողեր են, 8.5%-ը՝ բազմամյա տնկարկներ և 51.8%-ը՝ բնական կերային հանդակներ: Այստեղ են գտնվում խոշոր թռչնաֆաբրիկաներ և 10 հազ. գլուխ տավարի մատղաշի ինտենսիվ բտման համալիրը: Մշակվում է բարձրորակ ծխախոտ: Գյուղատնտեսության ապրանքային արտադրանքը կազմում է հանրապետականի շուրջ 8.2%-ը, որի 74 %-ը ստացվում է անասնաբուծությունից:

Մարզի գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումը հեռանկարում նպատակահարմար է ուղղել մսակաթնային տավարաբուծության և զարգացած արդյունաբերական թռչնաբուծության վերելքին: Այստեղ պետք է խրախուսել նաև պտղագործության (հնդավոր),

ծխախոտագործության, հատապտղագործության, մեղվաբուծության զարգացումը: Մեծ հնարավորություններ կան զարգացնելու ջերմոցային տնտեսությունը (բանջարագործություն):

7. <u>Շիրակի մարզի</u> գյուղատնտեսական արտադրությունը մասնագիտացված է մսակաթնային տավարաբուծության ուղղությամբ: Զարգացած են հացահատիկային տնտեսությունը և ոչխարաբուծությունը: Նախկինում այստեղ էր մշակվում նաև հանրապետության շաքարի ճակնդեղի հիմնական մասը: Մարզի կազմում են գտնվում Ախուրյանի, Ամասիայի, Անիի, Աշոցքի և Արթիկի նախկին շրջանները:

Մարզի տարածքը 262.1 հազ. հա է, որը կազմում է հանրապետության տարածքի 8.8%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերը զբաղեցնում են տարածքի 63.0%-ը: Վերջինիս կառուցվածքում վարելահողերի տեսակարար կշիռը 51.2% է, բնական կերային հանդակներինը՝ 48.5%: Այստեղ է արտադրվում հանրապետության հացահատիկի շուրջ 13%-ը: Ապրանքային արտադրանքը կազմում է հանրապետության գյուղատնտեսական ապրանքային արտադրանքի 8.6%-ը:

Հեռանկարում անհրաժեշտ է նպաստել արտադրության ձևավորված մասնագիտացման խորացմանը: Բացի դրանից, հաշվի առնելով Գյումրի քաղաքի բնակչությանը սննդամթերքով մատակարարման կարևորությունը, պետք է շահագրգռել մերձքաղաքային տնտեսության զարգացումը, այսինքն՝ աջակցել գյուղացուն դժվար փոխադրունակ մթերքների՝ կաթի, ձվի, բանջարեղենի, կարտոֆիլի արտադրության ընդլայնմանը: Կարելի է վերականգնել շաքարի ճակնդեղի արտադրությունը: Այստեղ կա երկու խոշոր թռչնաֆաբրիկա, որոնց բազայի հիման վրա հնարավոր է զարգացնել արդյունաբերական թռչնաբուծությունը:

8. <u>Սյունիքի մարզի</u> գյուղատնտեսական արտադրությունը զարգացած է մսակաթնային տավարաբուծության և ոչխարաբուծության ուղղությամբ: Որոշ չափով զարգացած է պտղագործությունը: Մարզը ներկայացված է Գորիսի, Կապանի, Մեղրիի և Սիսիանի վարչական նախկին շրջաններով:

Տարածքը 447.2 հազ. հա է, որն զբաղեցնում է հանրապետության տարածքի 15.0%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են մարզի տարածքի 42.9%-ը, որից 25.1%-ը վարելահողեր են, 1.4%-ը՝ բազմամյա տնկարկներ և 73.6%-ը՝ բնական արոտներ ու վարելահողեր: Այստեղ է տեղաբաշխված հանրապետության անտառների 16.7%-ը (63.8 հազ. հա):

Սյունիքի մարզում է արտադրվում հանրապետության ապրանքային արտադրանքի մոտավորապես 6%-ը, որում անասնաբուծական արտադրանքի տեսակարար կշիռը հասնում է ավելի քան 54%-ի:

Մարզի բնակլիմայական պայմանները նպաստավոր են մսակաթնային տավարաբուծության, ոչխարաբուծության զարգացման համար: Ուստի անհրաժեշտ է վարել նպատակամղված ագրոքաղաքականություն գյուղացուն աջակցելու հեռանկարում այդ ճյուղերի առաջնահերթ զարգացման ուղղությամբ:

9. <u>Վայոց Ձորի մարզը</u> մսակաթնային տավարաբուծության և ոչխարաբուծության գոտի է: Այստեղ են ընդգրկված Եղեգնաձորի և Վայքի վարչական նախկին շրջանները: Առաջինում բավականին զարգացած են նաև խաղողագործությունն ու պտղագործությունը: Մարզի տարածքը զբաղեցնում է 230.6 հազ. հա կամ հանրապետության տարածքի 7.8%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են մարզի ընդհանուր տարածքի 32.9%-ը: Վերջիններիս կառուցվածքում վարելահողերի տեսակարար կշիռը 26.4% է, բազմամյա տնկարկներինը՝ 5.4%, բնական կերային հանդակներինը՝ 68.2%, որով և պայմանավորված է տավարաբուծության և ոչխարաբուծության զարգացումը: Հանրապետության գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի կառուցվածքում մարզի տեսակարար կշիռը ամենափոքրն է՝ մոտ 2.5%:

Անասնապահության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ամենից առաջ հոգ տանել կերի կայուն բազայի ստեղծման ուղղությամբ: Պետք է ոռոգելի վարելահողերի մի մասը դնել եգիպտացորենի, ճակնդեղի, առվույտի ցանքի տակ, խոտհարք-

ներում ու արոտներում կատարել մակերեսային բարելավման աշխատանքներ: Անասունների ցեղային կազմը հետագա վատթարացումից փրկելու նպատակով անհրաժեշտ է վերականգնել կենդանիների արհեստական սերմնավորման կայանների գործունեությունը, բարելավման են ենթակա անասնաբուժական ծառայության աշխատանքները:

Մարզի գյուղացիական տնտեսությունների առջև սրությամբ ծառացած են արտադրված մթերքների իրացման հարցերը: Մթերող ձեռնարկությունները, որոնք գյուղմթերքներն արտադրողից գնելու և այնուհետև սպառողին են հասցնելու, ներկայումս, որպես այդպիսին, չեն գործում:

Առաջիկայում անհրաժեշտ է կենտրոնացված կարգով օգնել գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին՝ բարձրացնելու հողօգտագործման արդյունավետությունը, որին կնպաստի արտադրության մասնագիտացման ձևավորված ճյուղերի զարգացման խրախուսումը: Հնարավորություն կա արագացնելու պտղագործության, իսկ լրացուցիչ ճյուղերից՝ մեղվաբուծության զարգացման տեմպերը:

10. <u>Տավուշի մարզում</u> զարգացած են տավարաբուծությունը, պտղագործությունը, խաղողագործությունը: Մշակվում է բարձրորակ ծխախոտ: Մարզի կազմում են գտնվում Իջևանի, Նոյեմբերյանի և Տավուշի նախկին շրջանները, որոնց տարածքը՝ 270.4 հազ. հա է (այն կազմում է հանրապետության տարածքի 9.1%-ը): Գյուղատնտեսական հողերը կազմում են մարզի ընդհանուր տարածքի 36.5%-ը, որի կառուցվածքում վարելահողերի տեսակարար կշիռը 25.6% է, բազմամյա տնկարկներինը՝ 9.5%, մնացածը բնական կերահանդակներ են (64.9%): Մարզի տարածքը անտառածածկ է: Անտառները զբաղեցնում են տարածքի շուրջ 47%-ը: Այստեղ են արտադրվում հանրապետության գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի շուրջ 5%-ը:

Հեռանկարում անհրաժեշտ է նպաստել մարզում տավարաբուծության, պտղագործության, խաղողագործության զարգացմանը: Այստեղ մեծ են ծխախոտագործության հնարավորությունները: Չի բացառվում գազանաբուծության, շերամապահության, մեղվաբուծության զարգացումը:

Երևանի մարզում գյուղատնտեսական արտադրության հնարավորությունները սահմանափակ են: Ճյուղի ներուժն են կազմում Շահումյանի շրջանի և քաղաքային տնտեսությունների հնարավորությունները, որը, բնականաբար, չի կարող հիմք ծառայել քաղաքի բնակչությանը գյուղմթերքներով ապահովելու համար:

Հանրապետությունում գյուղատնտեսությունը ունենալու է արտադրության խառը մասնագիտացման ուղղություն՝ զարգացած թուսաբուծական և անասնաբուծական տարբեր ճյուղերով:

Թուսաբուծական ոլորտում զարգանալու են բանջարաբուծությունը, հացահատիկային տնտեսությունը, կարտոֆիլագործությունը, պտղաբուծությունը և այլն:

Անասնաբուծության ոլորտում զարգանալու են տավարաբուծությունը, թռչնաբուծությունը, ոչխարաբուծությունը, խոզաբուծությունը և այլն:

Հանրապետությունում պարենային հիմնախնդրի լուծումը պահանջում է մշակել այնպիսի միջոցառումներ, որոնց իրագործումը կխթանի գյուղացու շահագրգռվածությունը արտադրելու այն գյուղմթերքները, որոնք առաջնահերթ նշանակություն ունեն տեղական արտադրության սննդամթերքով բնակչության ապահովման մակարդակի բարձրացման և հողօգտագործման բարձր արդյունավետության հասնելու գործում: Այդ միջոցառումների իրականացումը հնարավորություն կստեղծի մոտակա տարիներին վերականգնելու ճյուղի կորցրած ներուժը և հեռանկարում կնպաստի նրա վերելքին:

Կայուն զարգացում ակնկալելու համար անհրաժեշտ է ունենալ խոշոր ապրանքային տնտեսություններ՝ մասնագիտացված հոծ արտադրանքով: Այդպիսով, տնտեսություններում հնարավոր կլինի կիրառել արտադրության վարման արդյունավետ համակարգ, ներդնել կազմակերպորեն ու տնտեսապես հիմնավորված ցանքաշրջանառություններ, այգիների մշակման ժամանակակից եղանակներ, բնական կերային հողահանդակների օգտագործման արդյու-

նավետ համակարգեր: Խոշոր տնտեսություններում հնարավոր կլինի ապահովել մեքենայացման միջոցների, ոռոգման ջրի և այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Գյուղացիական տնտեսություններում ծախսումների և եկամուտների, արտադրության չափերի ու ծավալների վերաբերյալ քիչ թե շատ ստույգ հաշվառում չի տարվում: Եղած տեղեկատվությունը գյուղապետարանների գնահատումներն են և ոչ թե հաշվառման արդյունք, որի համար էլ դրանք մոտավոր են և չեն արտահայտում իրական պատկերը:

Ներկա պայմաններում պահանջվում է գյուղատնտեսական կազմակերպությունների, ձեռնարկությունների նյութատեխնիկական և մասնագիտական սպասարկման ոլորտների պատշաճ կազմակերպում և զարգացում: Խոսքը գյուղատնտեսական արտադրական ենթակառուցվածքների նոր համակարգի ստեղծման, նրա գործունեության կարգավորման ու բարելավման մասին է: Նյութատեխնիկական սպասարկման, տրանսպորտային, շինարարական, մթերող, առևտրական, միջնորդական և համակարգի մյուս ձեռնարկությունների ու կազմակերպությունների ռիթմիկ գործունեության պայմաններում է միայն հնարավոր ապահովել գյուղատնտեսական կազմակերպության բարձր արդյունավետ աշխատանքը:

Ագրարային բարեփոխումների և շուկայական հարաբերությունների զարգացման ընթացքում, սեփականության բազմաձևության գործունեության պայմաններում, զգալիորեն փոխվում են գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման տնտեսական էության նախկինում եղած տնտեսաքաղաքական տեսություններն ու հայեցակարգերը, որոնք պահանջում են տնտեսավարության բարելավում, գյուղատնտեսության բոլոր ճյուղերի գիտական հիմունքներով վարում, պետական տնտեսական լծակների դերի բարձրացում, եղած ռեսուրսների ավելի ռացիոնալ օգտագործում, միավոր հողատարածության հաշվով արտադրված բարձրորակ և էկոլոգիապես մաքուր մթերքների ավելացում ու դրանց գների էժանացում:

Այսպիսով, գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ մասնագիտացումը անհրաժեշտ գործընթաց է, որի հետագա խորացման ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է դառնան ամբողջ գյուղատնտեսական արտադրության կառուցվածքի կատարելագործման ու կազմակերպման իրագործելի ծրագիրը: